

ԿԱՐԾԻՔ

Արաշ Դերամբարշի «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչ այսօր» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Արաշ Դերամբարշի «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչ այսօր» վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է ներկայումս համամարդկային նշանակության այնպիսի առանցքային խնդիրների՝ ինչպիսիք սննդային թափոնների շրջանառությանն առնչվող իրավական հիմքերի էական հակասություններն են, այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց տեսաիրավական լուծումները: Ընտրված թեման և դրա շրջանակում հեղինակի կողմից առանձնացված հարցադրումները ինչպես տեսական, այնպես էլ իրավաստեղծ և իրավակիրառ հարթությամբ արդիական են, ինչի առնչությամբ հեղինակը շարադրել է որոշակի հիմնավորումներ: Սննդային թափոնների հիմնախնդիրները, ըստ էության, ընդգրկում են անչափ լայն շրջանակ, դրանք համալիր վերաբերում են էկոլոգիական, սոցիալական, տնտեսական, քաղաքական, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության արդիական հարցադրումներին:

Այսպես, հեղինակը ի թիվս այլնի, թեմայի արդիականությունը, մասամբ՝ նաև հրատապությունը դիտարկել է նշված հարցադրումների առնչությամբ մեկ ընդհանուր հայեցակարգի բացակայության տեսանկյունից և նշել. «Սննդային թափոնները շարունակում են վնասել համաշխարհային տնտեսությունը և նպաստել կլիմայի փոփոխությանը, աղտոտմանը, ինչպես նաև բնության դեգրադացիային: Սննդային

թափոնները համաշխարհային ողբերգություն են: Իրոք, այսօր միլիոնավոր մարդիկ սովամահ են լինում, քանի որ ամբողջ աշխարհում սնունդը դեն է նետվում: Հետևաբար, մեր հետազոտությունն անդրադառնում է արդի հիմնախնդրի, և կոնկրետ պատասխանները կտան լուծումներ, որոնք դեռ չեն մշակվել և իրականացվել»: Ըստ այդմ էլ հեղինակը, թերևս, համոզիչ փաստարկներով հիմնավորել է այն, որ սննդային թափոնների հիմնախնդիրները սոսկ կենցաղային հարթությամբ դիտարկելը հավասարազոր է ողբերգության, քանզի այդպիսի սահմանափակ ընկալումները անդառնալի վնաս են պատճառում համամարդկային կարևորագույն արժեքների:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է, չկան այլոց մտքերն ու դատողությունները, միջազգային զեկույցներում արտացոլված մոտեցումները յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական ու տարընթերցումների տեղիք չտվող լեզվաոճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է պատշաճ բարեվարքություն: Աշխատանքը ձևավորված է համապատասխան պահանջների պահպանմամբ:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունն ու մասամբ նաև ներքին համակարգային կապը, թեպետ՝ այս առնչությամբ ունենք որոշ վերապահում, ինչին կանդրադառնանք դիտողությունների հատվածում: Նշված դրույթները կարող են հիմնարար նշանակություն ունենալ սննդային թափոնների հետ առնչվող տեսաիրավական լայն շրջանակ ընդգրկող հարցադրումների վերաբերյալ գիտական ուսմունքը էական նշանակություն ունեցող գիտական նյութով հարստացնելու, օրենսդրական բարելավումներին միտված առաջարկություններով հանդես գալու և իրավակիրառման ոլորտը բարելավելու համար:

Հետազոտության համար ընտրվել են մեծ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր: Հատկապես՝ մեծ աշխատանք է կատարվել

թեմայի հիմնահարցերին վերաբերող վիճակագրական հավաստի տվյալներ ձեռք բերելու և դրանք եզրահանգումների հետ փոխկապակցելու տեսանկյունից:

Աշխատության կառուցվածքի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել նախ, անդրադառնալու առավել ընդհանուր և եզրահանգումների համար կարևոր նյութ հանդիսացող, մասնավորապես սննդային շղթայի հետ կապված գրեթե բոլոր բաղադրիչների տեսաիրավական հարցադրումներին, իսկ արդեն երկրորդ գլխում հետազոտվել են այն խնդիրները, որոնք անմիջականորեն առնչվում են թափոններից ազատ, առավել պատասխանատու և գիտակից հասարակություն ձևավորելու հարցերին: Թերևս, նշված կառուցվածքն ընտրելիս, հեղինակը գործել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդաբանությամբ, քանզի ոչ միայն բխեցրել է եզրահանգումներ, այլև փորձել է դրանք ներկայացնել որոշակի հանդիպակաց ուսումնասիրությամբ: Հարկ է հավելել, որ աշխատանքի կառուցվածքը, ինչպես և թեմային առնչվող հարցադրումների, դրանց շարադրանքի ընտրությունը անթաքույց առանձնանում են զգալի ինքնատիպությամբ, դրանք, հայրենական իրավագիտությամբ ընդունված ավանդույթներից զգալիորեն տարբերվում են, ինչև ևս ընդգծում է այս թեզի օգտաշատությունը: Ընդհանրապես, թեզն առանձնանում է ֆրանսիական հետազոտական դպրոցին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ոչ միայն ընդունելի են հայրենական հետազոտական ավանդույթների համատեքստում, այլև կարող են նպաստել դրանց էլ ավելի համակողմանի զարգացմանը:

Հեղինակը արձանագրել է քննարկվող ոլորտներում առկա իրավակարգավորումների որոշ խնդիրները, դրանց առնչվող իրավական հարցադրումները ուսումնասիրության առարկա է դարձրել առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ և ըստ այդմ՝ բանաձևել է դրանց վերաբերյալ սեփական դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները: Ընդ որում, հեղինակը առավելապես օգտվել է ֆրանսիական իրավական համակարգից և իրավակիրառ պրակտիկայից, սակայն անհրաժեշտ չափով վերլուծվել է նաև միջազգային լավագույն փորձը:

Ատենախոսությունը, դրական գնահատելով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Ատենախոսության վերտառությունից բխում է, որ հեղինակը, ըստ էության, հանդես է եկել խիստ հավակնոտ ընդգրկվածությամբ, մասնավորապես, հետապնդել է սննդային թափոնների տեսաիրավական հարցադրումներին համալիր անդրադառնալու հետազոտական նպատակ՝ սկսած անտիկ ժամանակներից: Ըստ էության, աշխատանքում բերված են թեմային առնչվող որոշակի տվյալներ նաև անտիկ աշխարհից, սակայն հեղինակի եզրահանգումների հիմքում բացակայում է այդ երևույթի էվոլյուցիային առնչվող ասպեկտը: Ընդ որում, նախորդ ժամանակաշրջանին առնչվող հարցադրումները վերաբերում են ոչ այնքան սննդային թափոններին, որքան աղքատության ծագմանը, դրսևորումներին, միլիոնավոր կյանքեր խլած համաճարակներին, սննդամթերքի անհասանելիությանը և այլն:

Վերջին հաշվով, թեզում արտացոլված բոլոր եզրահանգումները փոխկապակցված են ներկայիս հիմնախնդիրների հետազոտության արդյունքների հետ, իսկ պատմական շրջադարձը անմիջականորեն համարժեք նյութ չի ծառայել դրանց հիմնավորվածության համար: Ինչ խոսք, հեղինակը բերում է համոզիչ փաստեր, որ աղքատության, սննդային անբավարարության հենքով սովամահության, համաճարակների խնդիրները բնավ նոր չեն: Սակայն իր իսկ կողմից ներկայացված նյութից բխում է, որ հիշյալ խնդիրները մեր ժամանակներում անխուսափելիորեն ձեռք են բերել նոր որակներ, պատճառահետևանքային միանգամայն նոր դրսևորումներ, ինչին, թերևս, արժեք անդրադառնալ, քանզի այդպիսի մեթոդաբանությունը հնարավորություն կտար համալիր բացահայտելու ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցության, հանրային իրավագիտակցության, ինչպես նաև սոցիալ-քաղաքական այլ գործոնների ի հայտ գալու և հեռանկարներին առնչվող բոլոր խնդիրները:

Սա կարևորում եմ, քանզի մարդկության մի զգալի հատվածի, շուրջ 811 միլիոն մարդու սովի մատնված լինելու պարագայում, նույն այդ անմարդկային երևույթը հաղթահարելու համար միանշանակ բավար մթերքի արտադրությունը վկայում է այն

մասին, որ ներկայումս սովի պատճառները փոխկապակցված են ոչ թե պակաս արտադրվող սննդամթերքի, այլ վերջինիս ավելցուկի վերաբաշխման և բազում այլ հարակից խնդիրների հետ:

2. Իմ երկրորդ նկատառումը մասամբ առնչվում է նախորդի հետ: Ինքնին խիստ անհանգստացնող սովը, հսկայական չափերի հասնող սննդամթերքի թափոնների առկայությունը (2019թ. այն կազմել է 931 միլիոն տոննա), հատկապես գլոբալ տաքացման հետ կապված սննդային թափոններից ծագող էկոլոգիական խնդիրները, սննդային թափոնների դեմ պայքարի իրավական հիմքերը և այլն հեղինակի կողմից ոչ միայն դարձել են հետազոտության առանձին ենթահարցեր, այլև փորձ է արվել բացահայտելու և առաջադրելու բոլոր այդ խնդիրները համակարգված լուծելուն միտված եզրահանգումներ, սակայն այս համակարգվածությունը, կարծում եմ, որոշ դեպքերում անհրաժեշտ ընդգրկվածությամբ չի ապահովվել: Մասնավորապես, որոշ փաստերի պատճառահետևանքային կապերը փորձ է արվել մեկնաբանել սոսկ օրենսդրական սանկցիաների ներդրմամբ, ինչպես նաև իրավագիտակցության բարձրացմամբ, ինչը, կարծում եմ, վիճահարույց է:

Այսպես, հեղինակը, վերլուծելով կենցաղային թափոնների կազմում սննդային թափոնների նվազեցման միտումները, այդ երևույթը բացատրում է «սպառողական հասարակության դեմ պայքարի» արդյունքներով: Սկզբունքորեն համամիտ լինելով նաև քարոզչական աշխատանքի անհրաժեշտության առնչությամբ հեղինակի մոտեցումների հետ, նաև չենք կարող անտեսել, որ կենցաղում սննդային թափոնների մասնաբաժնի կրճատումը թելադրված է նաև գների մեծ աճով, որպիսի պարագայում սպառողները ակամա ձգտում են չափավորել իրենց գնումները:

Ընդ որում, ելնելով հեղինակի կողմից բերված վիճակագրական տվյալներից, ըստ որոնց՝ սուպերմարկետներում սննդամթերքի առնվազն 30 տոկոսը վերածվում է սննդային թափոնների, թերևս, կարելի է եզրակացնել, որ սննդամթերքի գների արագ աճը թելադրված է նաև այդ հանգամանքով, քանզի վաճառքի համար նախատեսված ապրանքի այդպիսի մեծ կորստի պարագայում ինչպես արտադրողը, այնպես էլ վաճառք իրականացնող մեծածախ խոշոր գործարարները անխուսափելիորեն ձգտում

են կորուստները փոխհատուցել գնային անկանոն, անհիմն քաղաքականության միջոցով:

Կարծում եմ, շահույթ ստանալու անբեկանելի շարժառիթը չի կարելի անտեսել սննդային թափոններին առնչվող հարցադրումների ողջ շղթայում, ըստ այդմ էլ՝ ինչպես մեծածախ առևտրի, այնպես էլ կենցաղային սննդային թափոնների մի զգալի հատված թելադրված է ոչ այնքան հանրային գիտակցության ցածր մակարդակով, թույլ պաշտպանված խավերի իրավունքները անհամարժեք ընկալելու փաստով, որքան գերշահույթ ստանալուն ծառայող առևտրային այնպիսի գործոններով, որոնք առաջին հայացքից կարող են տրամաբանական թվալ, սակայն վերջնարդյունքում հանգեցնում են հենց վերը նշված բացասական հետևանքների: Օրինակ, հեղինակն անդրադարձել է փաթեթավորման խնդիրներին՝ սննդի պահպանման ժամկետները հնարավորինս երկակարացնելու ասպեկտով, ինչի հետ համամիտ ենք, սակայն կառաջարկեի նկատի ունենալ նաև նույն փաթեթավորման խնդրին այն ասպեկտով, որ գնորդներին հարկադրում է գնել սեփական կարիքներին գերազանցող չափով մթերք: Նկատի ունենք այն, որ առավել մեծ քանակով սննդամթերք գնելը գայթակղիչ դարձնելու նկատառումով, նույն սննդամթերքով ավելի մեծ փաթեթները կամ տարաները համեմատաբար ցածր գին ունեն: Այս դեպքում արտադրողը չի կորցնում, քանզի տարայի վրա արված ծախսերը նվազ են, սակայն մեծանում է թափոնների հավանական ծավալը:

Ստացվում է ներփակ շղթա, գների աճին զուիագեռ, գնողները չափավորում են իրենց գնումները, իսկ արտադրողները շարունակում են ավելացնել կամ առնվազն ձգտում են պահպանել արտադրանքի ծավալները, վստահ լինելով, որ գները բարձրացնելով կփոխհատուցեն իրենց վնասները: Ընդ որում, հանրային իշխանությունները ևս շահագրգռված չեն չափավորել արտադրողականությունը, քանզի իրենց առաջնահերթ հետաքրքրում են ոչ թե սննդային թափոններով պայմանավորված սոցիալական խնդիրները, որոնք ածանցյալ են, այլ առաջնահերթ ընկալվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ արտադրողականությունը, համախառն

եկամտի աճը, աշխատատեղերը, ձեռնարկատիրության ցուցանիշներով թելադրված պետական քյուջեն և այլն:

3. Ի դեպ, մենք սկզբունքորեն դեմ չենք, որ հեղինակն իր դատադրությունները և եզրահանգումները կառուցեր մասնավոր օրինակների վրա, ավելին՝ դա լրացուցիչ հավաստիություն է հաղորդում հետազոտության արդյունքներին: Ուղղակի, կարծում ենք, ատենախոսությունն առավել շահեկան կլիներ, եթե բոլոր այդ օրինակները դասակարգվեին, հստակ բացահայտվեր դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, դրանց ցուցաբերվեր առավել համակարգված, համալիր մոտեցում և առաջադրվեին առավել ընդգրկուն և օրինաչափությունների բացահայտմանը միտված եզրահանգումներ:

Մեր դիտարկումն առավել առարկայական ներկայացնելու նկատառումով դարձյալ անդրադառնանք հեղինակի կողմից բերված օրինակներին և դրանց վերաբերյալ իր գնահատականներին: Այսպես, ընդգծելով Ֆրանսիայի 2016 թվականի փետրվարի 3-ին ընդունված «Սննդամթերքի թափոնների դեմ պայքարի մասին» օրենքի զգալի արդյունավետությունը, հեղինակը համոզված պնդում է, որ սուպերմարկետներում պիտանիության ժամկետների կեղծման դեպքերը նվազել են, քանի որ այդ օրենքով այդպիսի արարքի համար սահմանվել է ընդհուպ 10 հազար եվրոյի չափով տուգանք: Կարծում ենք, պիտանիության ժամկետները կեղծելու այս արատավոր երևույթը համատարած է, սակայն դրա դեմ պայքարը կարող է ունենալ նաև հակասական դրսևորումներ: Օրինակ, հեղինակը ողջունում է նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում այդ ժամկետներն օբյեկտիվորեն մեծացնելու նախաձեռնությունը, սակայն գաղտնիք չէ, որ սննդամթերքի պիտանիության ժամկետները երկարացնելու ձգտումները միշտ չէ որ համահունչ են սպառողների շահերին, քանզի ներդրվում են այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք պահպանում են սննդամթերքի ապրաքային տեսքը, սակայն բաղադրությունը դարձնում են առողջության համար խիստ վտանգավոր: Արդյունքում մենք կարողանում ենք մասամբ լուծել սննդային թափոնների դեմ պայքարի խնդիրը, սակայն տանուլ ենք տալիս ոչ պակաս կարևոր մեկ այլ՝ քնակչության առողջության պահպանման ոլորտում:

Մի խոսքով, կարծում ենք, սննդային թափոնների խնդիրը մեկուսի երևույթ չէ, այն դե ֆակտո փոխկապակցված է բազում այլ սոցիալական, առողջապահական, տնտեսական, հոգեբանական և քաղաքական խնդիրների հետ, որոնց լուծումը ենթադրում է բացառապես համակարգված և ներդաշնակ եզրահանգումների համալիր:

4. Կարծում եմ, թեման ուղղակի առնչություն ունի համամարդկային մի շարք հիմնախնդիրների հետ, իսկ դրանց անդրադառնալը էլ ավելի կբարձրացնեք այս հետազոտության տեսաիրավական արժեքը: Վերջին հաշվով, հեղինակի եզրահանգումները արժեքավոր են՝ ներկայումս ձևավորված ժողովրդագրական, սննդամթերքի արտադրության, բաշխման ու վերաբաշխման արդի հարաբերությունների համատեքստում, սակայն չի կարելի անտեսել, որ աշխարհում արձանագրվում է բնակչության աննախադեպ աճ, որպիսի պայմաններում այս իրավիճակին համարժեք ու համապատասխան եզրահանգումներն արդեն հնարավոր է, որ որոշակիորեն կորցնեն իրենց արդիականությունը: Այս տեսանկյունից, հետաքրքիր կլինեք նաև հեղինակի դատողությունների ուղղվածությունը և դիապագունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 9 գիտական հոդվածներում, որոնք բոլորն էլ հրատարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի միջազգային գիտական հանդեսներում: Հեղինակն այլ միջազգային գիտական հանդեսներում ունի նաև հարակից թեմաներով մեծաթիվ գիտական հոդվածներ:


Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ հիշյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ: Ատենախոսությունը պատրաստված է ինչպես բովանդակային, այնպես էլ ձևավորման պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Արաշ Դերամբարշի «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչ այսօր»

վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի հեղինակին, պարոն Արաշ Դերամբարշին կարող է շնորհվել ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝

**ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Պետության
և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի
վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**


ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

12 մայիսի 2025 թվական

**Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝**

**ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ**



ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» մայիսի 2025 թվական